

ՀՏԴ 33:346.9 (479.243)

Տնտեսագիտություն

Շ.Շ.Ասրյան, տ. գ. թ.,

Արև Աշտեսագիտության տեսության և

կառավարման ամբիոնի դոցենտ

**ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԵՐԸ ԱՇՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Աչ տնտեսության զարգաման ժամանակակից պայմաններում բավական բարձր է սոցիալական լարվածության աստիճանը: Չնայած տնտեսական աճի բարձր տեմպերին Ահ-ում դեռևս չի հաղթահարվել աղքատության մակարդակը: Հողվածում անդրադարձ է կատարվել աղքատության հիմնախնդրին և նախանշվել եկամուտների բաշխման և վերաբաշխման միջոցով այն հաղթահարելու հնարավոր ուղիները:

**Բանալի բառեր** պահանջմունքներ, եկամուտներ, սոցիալական ապահովություն, եկամուտների արդարացի բաշխում, աղքատություն, եկամուտների վերաբաշխում, սոցիալական քաղաքականություն, ապահովության պետական երաշխիքներ, սոցիալական արդարություն

*Շուշանիկ Ասրյան, կ. ա. ն.,*

*доцент кафедры экономической теории и управления АрГУ.*

**ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНОЙ СПРАВЕДЛИВОСТИ В СОВРЕМЕННОМ РАЗВИТИИ ЭКОНОМИКИ  
РЕСПУБЛИКИ АРЦАХ**

**В современных условиях развития экономики Республики Арцах уровень социальной напряженности довольно высок. Несмотря на высокие темпы экономического роста, в АР уровень бедности еще не преодолен. В статье затронута проблема бедности и определены возможные пути ее преодоления путем распределения доходов и перераспределения.**

*Shushanik Asryan,*

*Associate professor, Ph.D. of the Department of the Theory of Economics and  
Management of Artsakh State University.*

**ISSUES OF SOCIAL JUSTICE IN THE MODERN DEVELOPMENT OF ARTSAKH'S ECONOMY**

In modern conditions of the development of the economy, the level of social tension is extremely high in the Republic of Artsakh. Despite the high rates of the economic growth, the poverty level has not been overcome yet. The article also touched the issue of poverty and identified the possible ways to overcome it by distribution and redistribution of income.

Ազգային բոլոր տնտեսություններում սոցիալական անարդարության դրսնորումները նախադրյալներ են ձևավորում սոցիալական ու բարոյահոգեքանական խոր ճգնաժամի առաջացման համար՝ փոխելով երկրի ժողովրդագրական իրավիճակը, առաջացնելով արտագաղթ, մարդկային կապիտալի վերաբարության տեսանկյուններից անցանկալի տեղաշարժեր, որոնք խոչընդունում են թե՛ մարդկային թե՛ տնտեսության զարգացմանը:

Համաեվրոպական վիճակագրությունը վկայում է, որ 2016թ. Եվրոպական տարածաշրջանում աղքատ է համարվում մոտ 117,5 միլիոն մարդ, կամ բնակչության 23,4%-ը, իսկ 2008թ-ին՝ 115,9 մլն. մարդ, կամ բնակչության 23,7 %-ը: 2008-2016թթ. աղքատության մակարդակը աճել է Եվրուսիության մի շաբթ երկրներում: Այդ երկրներից Հունաստանում աղքատության մակարդակը աճել է (+7,5%)-ով, Կիպրոսում(+4,4%)-ով, Իսպանիայում (+4,1%)-ով, Շվեյցարիայում (+3,4%)-ով: Աղքատության մակարդակը բարձր է նաև Եվրուսիության առավել բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում: Այսպես Գերմանիայում 2015թ. աղքատների թիվը հասել է 13 միլիոն մարդու, կամ բնակչության 16,7 %-ի: Եվրոպական տարածաշրջանում աղքատ են համարվում նրանք, որոնց եկամուտը չի գերազանցում բնակության երկրի եկամտի ցուցանիշի 60 տոկոսը հաշվի առնելով նաև վերջիններիս սոցիալական վճարները:

Աղքատության առավել բարձր մակարդակ ունեն Աֆրիկյան երկրները: Առավել աղքատ աշխարհի երկրների տասնյակը զիսափորում է Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, որտեղ տարեկան մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2016թ. կազմել է 572\$։ Սակայն ընդհանուր առմամբ, համաշխարհային մակարդակով դիտվում է ծայրահեղ աղքատության մակարդակի նվազում: Աղքատության մակարդակի նվազեցման լավագույն փորձը Չինաստանին է, որին հաջողվեց այն 1990թ. 66,6 % համեմատությամբ 2017թ. հասցել 3,1%-ի (Բնակչությունը օրական 1,90 դոլարից ցածր է սպառում 2011 թ. միջազգային զներով), և նպատակադրել է աղքատությունը վերջնականապես հաղթահարել 2020թ.: Հետխորհրդային հանրապետություններից ՌԴ -ում աղքատության մակարդակը 2016թ. կազմել է 13,5%, Ադրբեյջանում՝ 5%, Վրաստանում՝ 21,3%: Նշենք, որ ՄԱԿ-ը աղքատության չափանիշը է համարում եվրոպական տարածաշրջանում մեկ օրը 5 դոլարը, կամ ամիսը 150 դոլարը : Հինգ դոլարով հաշվարկի դեպքում նշված երկրներում աղքատության մակարդակը կլներ շատ ավելի բարձր:

Համաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի անկման երևույթները խիստ բացասական կարող են անդրադառնալ ԵՄ երկրների վրա, մյուս կողմից վերջիններս պարտքային բերից ստիպված բարձրացնում են կենսարժակների վճարման տարիքը, կրծատում կենսարժակների չափը: Այս զարգացումները կարող են հանգեցնել նրան, որ ապագա սերունդների կենսամակարդակը կարող է զիջել նախորդ սերունդների կենսամակարդակին: Եթե ավելացնենք նաև այն, որ աշխարհի մակարդակով առկա է նաև առավել բարձր եկամուտներ ունեցողների և առավել ցածր եկամուտներ ունեցողների եկամուտների տարբերությունների խորացում, ապա պարզ է դառնում, որ եկամուտների արդարացի բաշխման հիմնահարցը այսօր է համարվում է մարդկային հասարակության առջև ծառացած և լրտում պահանջող հիմնահարցերից մեկը: Բանն այն է, որ աղքատության հաղթահարման, եկամուտների արդարացի բաշխման վերաբերյալ առաջարրված բազում հայեցակարգային մոտեցումները, վարկածները դեռևս և ոչ մի երկրի շրջանակներում չեն ապահովել եկամուտների արդարացած բաշխում: Այդպիսի մոտեցումները զիսափորապես հանգեցրել են զարգացման բարձր մակարդակների ապահովման, որին ձգտում են հասնել նաև զարգացող երկրները:

Նշենք, որ հայկական երկու հանրապետություններում ՀՆԱ-ի խորհրդային մակարդակները հաղթահարվել են, սակայն երկու հանրապետություններում դեռևս բարձր է աղքատության մակարդակը: Աղքատությունը որպես երևույթ բնորոշ է աշխարհի բոլոր թե՛ զարգացած, թե՛ զարգացող, և թե՛ տնտեսապես հետամնաց երկրներին: Այն որպես բազմաշերտ և բազմատարք երևույթ՝ ներառում է հիմնական կենսաբական և սոցիալական պահանջմունքների բավարարման անկարողությունը: Աղքատությունը ունի երկու կողմ՝ տնտեսական կապված անհատի նվազագույն իրացվելի միջոցների առկայության և սոցիալական՝ կյանքի հատուկ ոճի, մարդկանց պահվածքի նորմերի հետ: Պարզ է, որ աղքատության բարձր մակարդակ ունեցող երկրներում ցածր է բնակչության «երջանկության» ինդեքսը: Աշխարհի մակարդակով բնակչության այսպես կոչված «երջանկության»<sup>1</sup> մակարդակը ևս վկայում է այն մասին, որ տարբեր երկրներում բնակվող մարդիկ ունեն «երջանկության» տարբեր մակարդակներ: Երկրների՝ ըստ երջանկության վարկանիշը 2017թ. դրությամբ ցույց է տալիս, որ երջանկության առավել բարձր մակարդակ ունեն այն երկրները, որտեղ բարձր է բնակչության կենսամակարդակը, բնականաբար որտեղ ցածր է բնակչության սոցիալական լարվածության մակարդակը: Հավելված 1<sup>2</sup>:

Ըստ այդ վարկանիշի աշխարհի 147 երկրների առաջին քառյակում հանդես են գալիս Նորվեգիան՝ 7,537, Դանիան՝ 7,522, Խաղաղօcean 7,504, Շվեյցարիան՝ 7,494 ինդեքսներով: Այդ նույն ցուցակում ՀՀ-ն գտնվում է 121-րդ տեղում:

Հայունի պատճառներով պայմանավորված և՝ ՀՀ բնակչության մեջ խորացալ սոցիալական անհավասարությունը, սոցիալական անարդարությունը: ՀՀ-ն ըստ Զինիի գործակիցի

<sup>1</sup> Գելլապա(Gallup international) միջազգային հետազոտական կենտրոնի կողմից հաշվարկվել և ներկայացվել է երջանկության ինդեքսը ըստ աշխարհի երկրների: Ցուցանիշի հաշվարկման հիմքում ընկած է բարեկեցության այնպիսի ցուցանիշը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, կյանքի սպասվող միջին տևողությունը, քաղաքացիական ազատության առկայությունը, անվտանգության զգացողությունը և վաղվա օրվա նկատմամբ հավատը, կայունությունը ընտանիքում, զբաղվածության երաշխիքները, կոռուպցիայի մակարդակը, հասարակական վստահության մակարդակը, ինչպես նաև մեծահոգությունը և առատաձեռնությունը:

2. <http://gtmarket.ru/news/2017/03/20/7316>

1990-ական թվականներին դասվեց Եկամտային անհավասարության բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում: Ակնհայտ է, որ ԱՀ-ն ևս ուներ Եկամուտների անհավասարության բարձր մակարդակ: Կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման համար նախադրյալներ ձևավորեց 2004-2008թթ.-ին բարձր տնտեսական աճը, որը նպաստեց թե՛ իրական աշխատավարձի, թե՛ զբաղվածության մակարդակի բարձրացմանը և կայունացման, ինչպես նաև սոցիալական ծառայություններին ու տրանսֆերներին ուղղվող բյուջետային ծախսերի ավելացմանը ՀՀ-ում: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճը իր դրական ազդեցությունը թողեց բնակչության ընդհանուր և ծայրահեղ աղքատության մակարդակների նվազեցման վրա: Սակայն 2009թ-ից ՀՀ-ում աճեց և՝ աղքատության մակարդակը, և՝ ծայրահեղ աղքատությունը կազմելով համապատասխանաբար՝ 34.1% և 3.6%՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով:

ՀՀ և ԱՀ մակրոտնտեսական իրավիճակի 2013-2016թթ. կտրվածքով բնութագրիչների դիտարկումները ցույց են տալիս երկու հանրապետությունների մակրոտնտեսական իրավիճակի զարգացումների լնդիանրություններն ու տարբերությունները (Հավելված 2, Հավելված 3):

Նախ հայկական երկու հանրապետություններում դրլարի միջին անվանական կուրսը ղիտարկվող ժամանակահատվածում նույն մակարդակում է : Իրական ՀՆԱ-ի աճի տարեկան տեմպերը զգայի տարբեր են: Եթե ԱՀ համապատասխան ցուցանիշները նշված ժամանակահատվածում զերազանցում է ՀՀ ցուցանիշները, ապա ՀՀ գործազրկության մակարդակը գերազանցում է ԱՀ համապատասխան ցուցանիշը: Երկու հանրապետություններում նկատելի մոտ են զնամի ցուցանիշները: Զգալիորեն տարբեր են համախմբված բյուջեի ծախսեր ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշները: Այդեւ, եթե 2016թ. ՀՀ համապատասխան ցուցանիշը կազմել է 29,2%, ապա ԱՀ ցուցանիշը՝ 37,3%: Զաջորդ ցուցանիշը՝ ՀՀ համախմբված բյուջեի պակասուրդ ՀՆԱ հարաբերակցությունը 2016թ. կազմել է -5,5%, իսկ ԱՀ համապատասխան ցուցանիշը՝ -22,2%: Որոշ տարբերություններ առկա են նաև միջին անվանական աշխատավարձների մակարդակներում: 2016թ. ՀՀ ցուցանիշը կազմել է 174 445 դրամ, իսկ ԱՀ ցուցանիշը՝ 152 707 դրամ:

ՀՀ տնտեսությունը 2016թ-ին նախորդ տարվա նկատմամբ աճել է 0,2 %-ով: 2016թ-ի ՏՏՎԱՀ տվյալները ցույց են տալիս, որ ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008թ-ի համեմատ աճել է 16,1%-ով և աճը նկատվել է սպառման բոլոր քվինտիլներում: 2016թ-ին Հայաստանի տնտեսության աճի համեստ տեմպը նախորդ տարվա նկատմամբ բավարար չէր երկրում աղքատության մակարդակի նվազման համար: Աղքատության մակարդակի պաշտոնական գնահատման հրապարակումից հետո՝ 1996թ-ից առաջին անգամ 2016թ-ին սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ նվազել է, ինչը նպաստել է աղքատության զծերի նվազմանը, որն էլ իր դրական ազդեցությունն է ունեցել աղքատության մակարդակի կրճատման վրա: Այսպես 2015թ-ի համեմատ աղքատության մակարդակը նվազել է 0,4 տոկոսային կետով և կազմել 29,4% ( Հավելված 11): Սակայն դեռևս չի հաղթահարվել 2008թ-ի աղքատության մակարդակը(27,6%): Դրան հակառակ ԱՀ տնտեսական աճի միջին տեմպերը բարձր են ՀՀ տնտեսական աճի միջինից (վերջին տասը տարիների ընթացքում ԱՀ տնտեսական աճի միջին տեմպը կազմել է 10,4%), սակայն աղքատության մակարդակի վրա դրական ազդեցության միտումները ակնհայտ չեն:

ԱՀ-ում արաջին անգամ 2014թ-ին ներդրվեց տնային տնտեսությունների բարեկեցության ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանությունը, երբ ԱՀ ազգային վիճակագրական ծառայությունը իրականացրեց տնային տնտեսությունների մակարդակով տվյալների հավաքագրում հանրապետության կտրվածքով՝ աղքատության մակարդակի ստույգ գնահատման իմաստով։ Ըստ գնահատումների ԱՀ-ում 2016թ. աղքատության մակարդակը կազմել է 23,3%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 6,2%, նախորդ՝ 2015թ. 22,8%-ի և 6,5%-ի փոխարեն, երբ ԱՀ տնտեսական աճը նույն ժամանակահատվածում կազմել է 9,1%։

Աչ աղքատության մակարդակի գնահատումը ըստ սպառման և ըստ եկամուտների հնարավորություն է տալիս ներկայացնելու աղքատության ամբողջական պատճերը: Անհարժեշտ է հաշվի առնել, որ եկամուտների ու ծախսերի անհավասար բաշխվածության գնահատումը, եկամուտները չբացահայտելու հակվածության էֆեկտով պայմանավորված, ըստ տնային տնտեսությունների ծախսերի՝ առավել վստահելի ցուցանիշ է, քան ըստ եկամուտների

ցուցանիշները: Բնակչության եկամուտների կամ ծախսերի տարբերակման համար հաշվարկվում է «քևեռային» քվինտիների հարաբերության գործակիցը<sup>1</sup>:

Աղքատության ուսումնասիրության ընդհանուր պատկերն ԱՀ-ում ցույց է տալիս, որ լինելով բարձր այն նաև դրսնորում է աճման միտում, աճում են նաև դրամական եկամուտների հարաբերության և ծախսերի հարբերության տարբերությունները: Բնակչության եկամուտների կամ ծախսերի «քևեռային» դեցիների հարաբերության գործակիցը (այն է 10% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին) ավելի ցայտուն է, քան քվինտինային հարաբերության գործակիցը: 2016թ-ին այդ հարաբերակցությունն, ըստ սպառողական ծախսերի կազմել է 8,9, 2014թ-ի 8,8 անգամի փոխարեն, իսկ ըստ բնակչության դրամական եկամուտների հարաբերակցությունը՝ 15,8 անգամ, 2014թ-ի 10,7 անգամի փոխարեն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անապահով տնային տնտեսությունների սննդի համար կատարվող ծախսերի մասնաբժինն ընդհանուր սպառողական ծախսերի կազմում ավելի մեծ է, քան միջին հանրապետականը, ինչը և սպասելի էր: Մինչդեռ ըստ Գլածեի առավել բարձր եկամուտներ ունեցող բնակչության խմբի 10 տոկոսի և առավել ցածր եկամուտներ ունեցող բնակչության խմբի 10 տոկոսի եկամուտների միջև տարբերության տնտեսական անվտանգության շեմային մեծությունը՝ 8 անգամ է: Այսինքն ԱՀ համապատասխան ցուցանիշը անվտանգության շեմային մեծությանը գերեզանցում է մոտ երկու անգամ:

Սպառման, եկամուտի և դրանց բաշխվածության անհավասարությունը գնահատվում է ողջ բնակչության համար Զինիի գործակից միջոցով, ըստ որի ԱՀ-ում բնակչության քևեռացումն, ըստ եկամուտների ցուցանիշի, ավելի խորն է սպառման ազրեզատի ցուցանիշի համեմատ: 2016թ-ին սպառման անհավասարությունը, ըստ Զինիի գործակից, կազմել է 0,287, 2015թ-ի 0,258-ի փոխարեն: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունը կազմել է 0,388, 2014թ. 0,307-ի դիմաց: Հավելված 7:

Ենելով առկա իրավիճակից, երկրի սոցիալ-տնտեսական պայմաններից, մակրոտնտեսական ցուցանիշների միտումներից, անհրաժեշտ է կազմել ու իրագործել եկամուտների բաշխման հստակ ծրագիր՝ ենելով հավասար հնարավորությունների և զրկանքի բացարձակ բացառման շամաշխարհային զարգացման գեկուցում արտացոլված սկզբունքներից: Այս տեսանկյունից կարևորվում է նաև այդ բաղադրականության կառուցումն առանձին քվինտիլային և դեցիլային խմբերից ենելով, քանի որ առանց հստակ մշակված կառուցվածքի և կոնկրետ թիրախային խմբերին ուղղված բաղադրականության, ապահովել արդարացի բաշխում և միևնույն ժամանակ տնտեսական արդյունավետություն, անհնար կլինի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին տարբերին ուղղված հստակ մշակված մեխանիզմների արդյունավետ գործունեության ապահովումը բավականին դժվար է, պայմանավորված հասարակության տարբեր խավերի շահերի հակասություններով: Բացի այդ, խնդրի խորությունը և բարդությունը արտահայտվում է դրանում, որ կարգավորման պարագայում անգամ երկրում ստեղծված տնտեսական լծակների և ոլորտների կենտրոնացվածությամբ պայմանավորված երկար ժամանակ պահել եկամուտների նորմալ բաշխվածություն հնարավոր չի լինի: Որպես մեկնարկային պայմանների տարբերություններ գույքային սեփականության տարբերություններն այնքան մեծ են, որ եթե նույնիսկ հնարավոր լիներ մեկ հարգածով ապահովել եկամուտների հավասարաշափ բաշխվածություն, միևնույն է այդ հարաբերակցությունը կրկին կիրայի կիրայի ի օգուտ հասարակության վերին քվինտիլի, շատ կարծ ժամանակահատվածում: Այս առումով արդյունավետ և կիրառելի է առանձին քվինտիլային, և դեցիլային խմբերի շուրջ տարբեր հարկային բաղադրականության բնագավառում համաշխարհային փորձը, երբ (ասենք Ֆրանսիայի օրինակով) դեցիլային վերին երկու խմբերի նկատմամբ կիրառվող կոչու հարկային մեխանիզմների և հարկման դրույքաշափերի արդյունքում հավաքագրված միջոցները նպատակառողիկում են հասարակության սոցիալական խոցելիության բարձր մակարդակ ունեցող խավերին՝ բյուջետային բաղադրականության (ծախսային) միջոցով:

ԵՎ ՀՀ, և ԱՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում դեռևս բարձր է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը: Անուղղակի հարկերից ԱԱՀ-ն ավելի շատ ազդում են ցածր եկամուտներ ունեցող սուբեկտների վրա և բերում աղքատության խորացման: Սակայն

<sup>1</sup> Քվինտիլների հարաբերության գործակիցը՝ 20% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին:

համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում (ԱՀ-ում հարկային բարեփոխումներով), պայմանավորված առանձին հարկատեսակների ՀՆԱ-ի մեջ ունեցած մասնաբաժինների կառուցվածքային տեղաշարժերով, այս միտումները փոփոխվեցին: Այս տեսանկյունից, կարևոր է հարկային եկամուտների ավելացումն աղքատության հաղթահարման գործում: Հարկային եկամուտների ձևավորման համակարգում, հետևելով զարգացած երկրների փորձին, կարևոր են կիրառել այնպիսի գործիքներ, որոնք կխորացնեն առկա կառուցվածքային տեղաշարժերը՝ մեծացնելով ուղղակի հարկերի մասնաբաժինը, քանի որ այս պարագայում տնտեսությունը ճգնաժամների նկատմամբ դառնում է առավել քիչ խոցելի, իսկ սոցիալապես անապահով խավն առավել պաշտպանված:

Հարկ է նշել, որ 2010-2016թթ. ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների տեսակարար կշիռը գնալով նվազում է, մյուս կողմից բյուջեի ծախսերի կառուցվածքում աճում է սոցիալական ծախսերի տեսակարար կշիռը:

Երկու հանրապետությունների համախմբված բյուջեների ամփոփ ցուցանիշների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ պետական բյուջեի ընդամենը եկամուտները և պաշտոնական տրանսֆերները ՀՆԱ-ի նկատմամբ ԱՀ-ի ցուցանիշը 2012թ. 19,6%-ի համեմատությամբ կրածավել է և 2016թ. կազմել՝ 15,1%, իսկ ՀՀ-ում ցուցանիշը 2012թ. 22,9%-ի փոխարեն աճելով կազմել է 23,7%: Հարկեր և տուրքեր ցուցանիշները ևս տարբեր միտումներ են դրսնորում: ԱՀ ցուցանիշը դրսնորում է որոշակի անկայունություն և 2016թ. ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 14,3%, իսկ ՀՀ ցուցանիշը 21,7%: Չնայած աղքատության առաջացման պատճառների բազմազանությանը, այնուամենայնիվ, ԱՀ-ում սոցիալ-տնտեսական տեղաշարժերը վկայում են, որ աղքատության հիմնախնդիրը մասամբ պայմանավորված է նաև եկամուտների վերաբաշխման խնդրով:

ՀՆԱ-ի նկատմամբ համախմբված բյուջեի ծախսերը ևս տարբեր մակարդակներ են դրսնորում: ԱՀ-ում ցուցանիշը 2016թ. կազմել է 37,3%, իսկ ՀՀ ցուցանիշը նույն ժամանակահատվածում 29,2%: Պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ ցուցանիշը 2012թ. -1.4% -ի համեմատությամբ աճել և կազմել -5.5%, իսկ ԱՀ ցուցանիշը 2012թ. -30.8%-ից կրածավելով կազմել է -22.2%:

Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը ընդամենը համախմբված բյուջեի նկատմամբ ՀՀ-ում նվազելով, 2016թ. կազմել են 46,3%, իսկ ԱՀ-ում աճելով կազմել՝ 49,0% ( Հավելված 10 ): Ծախսերի կառուցվածքում ևս առկա են որոշ տարբերություններ: Այսպես սոցիալական ծախսերի տեսակարար կշիռը ծախսերի նկատմամբ ԱՀ-ում ավելի բարձր է, քան ՀՀ-ում: Կենսարժակները ՀՀ-ում գերակշռում են ԱՀ համապատասխան ցուցանիշը:

Ինչ վերաբերում է աղքատության աճը պայմանավորող գործոններին, ապա 2008-2016թթ.-ին ՀՀ-ում 2009թ.-ի տնտեսության խոր անկումն էր, ինչը չի կարելի ասել ԱՀ-ի համար: ԱՀ-ում տնտեսական անկում չի արձանագրվել: ՀՀ աղքատության գործոնային վերլուծությունը ցույց է տալի, որ տնտեսական աճի<sup>1</sup> և աղքատության մակարդակի կրածատման միջև առկա է որոշակի դրական կախվածություն:

2015թ.-ին աղքատության համար Հայաստանին անհրաժեշտ էր 71,4 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1,4 % կազմող գումար, իսկ 2016թ. 54,6 մլրդ., ՀՆԱ-ի 1,2% տոկոս կազմող գումարի չափով՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: ԱՀ-ում ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 0,7 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 0,3 %-ը, իսկ աղքատության համար 3,4 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1,5% տոկոսային կետի չափով: ՀՀ-ում ծայրահեղ աղքատության վերացումը 2016թ. կպահանջի ՀՆԱ-ի 0,03 %-ը ( Հավելված 13):

Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են:

Ընդհանրացնելով կարելի նշել, որ հայկական երկու հանրապետություններում 2016թ. աղքատությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է 55 մլրդ. դրամ, ի տարբերություն 2015թ. մոտ 75 մլրդ. դրամի:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ սոցիալական արդարության հայեցակարգերը կարող են փոխվել՝ պայմանավորված վերջին տնտեսական զարգացումների հետ: Այս համատեքստում ԵՄ

<sup>1</sup> <http://www.armstat.am>

և աշխարհի մի շարք երկրներ ստիպված են վերանայել իրենց սոցիալական արդարության մոտեցումները, քանի որ ընդլայնողական ծախսային քաղաքականությունն առաջացրել է մի շարք երկրների բյուջեներում մեծ պակասուրդ, իսկ աճող սոցիալական պարտավորությունները և կրատվող հարկերը թույլ չեն տալիս պետական կառավարման մարմիններին կատարելու իրենց պարտավորությունները։ Այդ իմաստով՝ նույնական իրավիճակներ են հայկական հանրապետություններում՝ արտաքին պարտքի զգալի բարձր մակարդակը, ցածր հարկային դրույքները, աճող պետական ծախսերի մակարդակները թույլ չեն տալիս կտրուկ ավելացնելու աղքատության հաղթահարման միջոցները։

ԱՀ-ում գործազրկության 15,8% մակարդակի և աղքատության 23,3%-ի, բնակչության կազմում կենսաթղակառուների թիվի 21,4%-ի, աշխատունակ տարիքից բարձր (63 և բարձր տարիքի) բնակչության (2016թ.) կազմում բնակչության 11,9%-ի առկայությունը խոսում է բնակչության սոցիալական ապահովության հիմնախնդրի բազմաշերտության մասին, որը բնորոշ է նաև ՀՀ-ին։ Մյուս կողմից հայկական երկու հանրապետություններում էլ աղքատության հաղթահարման հիմնական միջոցները սոցիալական տրանսֆերտներն են։ Թեև սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեց տարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (ԱՀ-ում 2016թ. 8,8%)։ Ամբողջ բնակչության հաշվով, եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ տնային տնտեսությունները բավարար ուսուրաների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը զգալիորեն կամի, էապես կիսորանա և կարվի։

Ի համեմատ դրամական սոցիալական աջակցության՝ կենսաթղակաները որպես սոցիալական տրանսֆերտների առավել մեծ բաղադրիչ, առավել մեծ ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում։ Ըստ «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակների վիճակագրական հետազոտությունների՝ դրանց միջև առկա տարբերությունները աղքատության մակարդակի փոփոխության վրա սոցիալական տրանսֆերտների ներգործության գնահատականն է։ Այն ցույց է տալիս, որ եթե դադարեն տրանսֆերտների և սոցիալական վճարների տրամադրումը, ապա ԱՀ-ում աղքատության մակարդակը 23,3%-ից կրաքարանա 47,0%-ի։ Այդ իմաստով՝ կենսաթղակաները, որպես առավել մեծ սոցիալական տրանսֆերտներ, աղքատության հաղթահարման առումով ունեն կենսական կարևորություն։ Բնակչության եկամուտների նման կառուցվածքային տեղաշարժերը, ինչպես նաև տրանսֆերտներից կախվածության պայմաններում եկամուտների արդարացի բաշխման պետական քաղաքականությունը պետք է կառուցվի այն գաղափարախոսությամբ, որ եկամուտների արդարացի բաշխումը պետք է ապահովեն ոչ թե նպաստները, կենսաթղակաները և տրանսֆերտները, այլ աշխատավարձերը և ինքնազբաղվածության արդյունքում ստացված եկամուտները։ Եվ միայն բնակչության եկամուտների արդարացի բաշխման ուղղված արդյունավետ կառավարման մեխանիզմների, հստակ մշակված կառուցվածքային բարեփոխումների իրականացման և մշակված ռազմավարությունների իրագործմամբ, նշված իրավիճակում, կարող է մեղմվել սոցիալական անհավասարության վիճակը։

Աղքատության գերինդիրն է հասնել եկամուտների մոտեցմանն այն իմաստով, որ ծայրահեղ աղքատներ չլինեն, իսկ աղքատների տեսակարար կշիռն ընդհանուր ազգաբնակչության մեջ քիչ տեսակարար կշիռ կազմի։ Քանի որ տնտեսական առկա իրավիճակը հնարավորություններ չի ստեղծում աղքատության հաղթահարման անհրաժեշտ միջոցներ ուղղել, հետևաբես եկամուտների արդար բաշխման համակարգը պետք է ներառի ազգային հաշիվների համակարգում եկամուտների ձևակումից մինչև եկամուտների տնօրինում շղթայի հաջորդական քայլեր։ Քանի որ եկամուտների ձևակուման գործընթացը հիմնականում ապահովում է շուկան, իսկ շուկան և սոցիալական արդարությունը, որպես եկամուտների հավասարաշափ բաշխում, անհամատեղելի են ուստի և եկամուտների արդար բաշխման համար պետք է որոշակիորեն միավորվեն պետության և շուկայի գործառույթները։ Այն ԱՀ-ում ապահովելու համար անհրաժեշտ է նաև տնտեսական քաղաքականությունը կառուցել ելներով տնտեսության ՀՆԱ-ի արտադրական եղանակով ըստ ճյուղերի ստացվող գրաւ եկամուտի մեծությունից, կիրառելով տնտեսական աշխատավարձերի, արտադրողականության, ինչպես նաև զբաղվածության համադրական մեխանիզմներ։

Քանի որ Ազգային հաշիվների համակարգում եկամուտների ձևակումանը հաջորդում է սկզբնական եկամուտների բաշխման գործընթացը, իսկ այնուհետև եկամուտների երկրորդային բաշխումը, որոնց ընթացքում տնտեսության մեջ ձևական սկզբանության սկզբում են բաշխվել,

իսկ այնուհետև վերաբաշխվել առանձին սուբյեկտների կամ տնտեսության հինգ հատվածների միջև, այդ պատճառով տնտեսության մեջ եկամուտների բաշխվածության ձիշտ պետական քաղաքականությունը մակրո մակարդակում պետք է սկսել իրազրծել սկզբնական և երկրորդային բաշխման հաշիվների առանձին ցուցանիշների ազդակներից և դրանց վրա նպատակաուղղված ազդեցությունից ելնելով: Հատկապես, որ ԱՀ սկզբնական եկամուտների բաշխվածության գիշավոր ցուցանիշը՝ տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները գրանցում են ամեն միտումները (2016թ. ՀՆԱ-ի կառուցվածքում այս կազմել է 45,7%, իսկ աշխատավարձը՝ 49,9%):<sup>11</sup> Ավելի հաճախ ՀՀ տնտեսության մեջ ձևավորված տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները օգտագործվում են գրումարներ արտերկիր փոխանցելու համար:: Վերջինս փաստում է այն մասին, որ մինչև համախառն ազգային եկամտի ձևավորումը Հայաստանից բավականին գումարներ արտահոսում են: Ազգային հաշիվների համակարգում եկամուտների սկզբնական և երկրորդային եկամուտների բաշխման ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան մի շարք հնարավորություններ եկամուտների բաշխման արդյունավետ քաղաքականություն ունենալու համար: Այսպիսի իրավիճակում գերինայիր է դառնում առկա ուսուրաների արդյունավետ օգտագործման մեխանիզմների հիման վրա տնտեսության մեջ ստացված եկամուտների հսկայական զանգվածի երկրում առանձին ոլորտներում ներդրման ապահովումը: Այս առումով իրենց կարևորությունն են ստանում արդյունավետ հարկադիր և ներդրումային արտաքին առևտրային քաղաքականությունների մեխանիզմների մշակումը և դրանց իրազրծումը, քանզի նշված քաղաքականություններից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել տնտեսության մեջ ինչպես եկամուտների անհավասարաչափ բաշխվածության, այնպես էլ անհավասարաչափ բաշխվածությունը մեղմելու հնարավորությունը ընձեռնելով կապիտալի արտահոսքի կանխմանը:

Եկամուտների բաշխման խնդրին տարբեր տնտեսագետների կողմից տարբեր դարաշրջաններում տրվել է տարբեր մոտեցում: Կարծում ենք, որ եկամուտների բաշխման մեխանիզմը չի կարող կիրառվել տարբեր ազգային տնտեսությունների համար: Դրա համար յուրաքանչյուր երկիր, մասնավորապես ԱՀ-ն՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում երկիր սոցիալ-տնտեսական պայմաններից, մակրոտնտեսական ցուցանիշների միտումներից, պետք է կազմի ու իրազրծի եկամուտների բաշխման հստակ ծրագիր՝ ելակետային ընդունելով Համաշխարհային զարգացման գեկույցում արտացոլված հավասար հնարավորություններ և զրկանքի բացարձակ բացառում սկզբունքները:

Հաշվի առնելով եկամուտների անհավասարության խորացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները՝ անհրաժեշտ է ունենալ ապագայի զարգացման հստակ տեսլական, որը հնարավորինս չի ենթարկվի ինչեւ ներքին, այնպես էլ արտաքին տնտեսական ցնցումների: Այս համատեքստում առավել արդյունավետ կլինի բնակչությանը կոնկրետ հիմնական տարիքային խմբերի առանձնացնելը, և յուրաքանչյուր խմբի համար որոշակի նպատակային քաղաքականություն մշակելը:

### Գրականության ցանկ

1. Աղասի Թաղիսոսյան, Աղքատության հիմնախնդիրները պետության զարգացման և ամրապնդման տեսանկյունից, Երևան, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, 2003թ.
2. Արմինե Միսակյան, «Բնակչության դրամական եկամուտների արդարացի բաշխման խնդիրները ՀՀ-ում» ՀՀ.00.02-«Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախոսության սեղմագիր, 2013թ. :
3. Ղարիբյան Գ. Հակոբջանյան Ա. Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում անցումային տնտեսությունում, Երևան, 2011թ.:
4. Бирюков С. Классик государственного социализма // www.apn.ru/publications/article17749.htm
5. Волгин Н. А., Грищенко Н. Н. Социальное государство: учебник. М., 2003г:
6. Холостова Е. И. Социальная политика: учебное пособие. М., 2000г
7. <http://www.armstat.am>
8. [www.stat-nkr.am/](http://www.stat-nkr.am/)

<sup>11</sup> [www.stat-nkr.am/](http://www.stat-nkr.am/)

**Հավելվածներ**

Աշխարհի երկրների վարկանիշը ըստ բնակչության երջանկության մակարդակի 2017թ. դրությամբ  
Հավելված 1

Վարկանիշ	Երկրներ	Բնդերս
1	Նորվեգիա	7.537
2	Դանիա	7.522
3	Իսլանդիա	7.504
4	Շվեյցարիա	7.494
85.	Ադրբեյչան	5,234
121.	Հայաստան	4,376
125.	Վրաստան	4,286
155.	Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն	2,693

**ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները, 2013-2016թթ.****Հավելված 2.**

	2013	2014	2015 <sup>◊</sup>	2016
Անվանական ՀՆԱ (մլրդ. դրամ)	4 555.6	4 828.6	5 043.6	5 079.9
Անվանական ՀՆԱ (մլն. ԱՄՆ դոլար)	11 121.3	11 609.5	10 553.3	10 572.3
Իրական ՀՆԱ-ի աճ (տարեկան տոկոսային աճ)	3.3	3.6	3.2	0.2
Իրական ՀՆԱ-ի աճ 2012թ. նկատմամբ (տոկոսային աճ)	3.3	7.0	10.4	10.7
ԱՄՆ դոլարի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	409.63	415.92	477.92	480.49
Գործազրկության մակարդակ, (տոկոսներով)	16.2	17.6	18.5	18.0
Միջին ամսական անվանական աշխատավարձ (դրամ)	146 524*	158 580	171 615	174 445
Գնաճ (միջին տարեկան)	5.8	3.0	3.7	-1.4
Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	25.7	26.3	28.6	29.2
Համախմբված բյուջեի պակասուրդ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	-1.5	-1.9	-4.8	-5.5

**ԱՀ մակրոտնտեսական ցուցանիշները, 2013-2016թթ.****Հավելված 3**

	2014	2015 <sup>◊</sup>	2016
Անվանական ՀՆԱ (մլրդ. դրամ)	188.8	209.3	229.7
Անվանական ՀՆԱ (մլն. ԱՄՆ դոլար)	454.0	438.0	478.1
Իրական ՀՆԱ-ի աճ (տարեկան տոկոսային աճ)	8.9	9.1	9.2
Իրական ՀՆԱ-ի աճ 2012թ. նկատմամբ (տոկոսային աճ)	7.0	10.4	10.7
ԱՄՆ դոլարի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին)	415.92	477.92	480.49
Գործազրկության մակարդակ, (տոկոսներով)	13.3	11.5	15.8

Միջին ամսական անվանական	134 310	151 058	152 707
աշխատավարձ (դրամ)			
Գնած (միջին տարեկան)	4.5	3.5	-1.5
Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	41.9	40.4	37.3
Համախմբված բյուջեի պակասուրդ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	-24.8	-23.5	-22.2

**ԱՀ աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների 2014-2016թթ.****Հավելված 4<sup>1</sup>**

	2014թ	2015թ	2016թ
Սպառումը մեկ չափահասին համարժեք (ամսական), դրամ, 2014թ-ի միջին հանրապետական գներով	52485.8	55 441.8	56 074.1
Եկամուտը, մեկ չափահասին համարժեք, (ամսական), դրամ, 2014թ-ի միջին հանրապետական գներով	76344.9	72 511.7	78 902.1
Եկամուտ/սպառում հարաբերությունը	1.5	1.3	1.4
Սպառման ցուցանիշով աղքատներ(տոկոսներով)			
Ծայրահեռ աղքատներ	6.0	6.5	6.1
Աղքատներ	26.2	22.8	23.3
Եկամտի ցուցանիշով աղքատներ, (տոկոսներով)			
Ծայրահեռ աղքատներ	7.9	7.7	8.1
Աղքատներ	17.8	15.3	17.5
Ոչ աղքատ բնակչության մակարդակը	73.8	77.2	76.7

ԱՀ 20 տոկոս ամենասպահով և 20 տոկոս ամենանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2014-2016թթ. (անգամ) **Հավելված 5**

	2014	2015	2016
Հստ դրամական եկամուտների	6.5	5.9	7.6
Հստ սպառողական ծախսերի	5.7	5.5	5.3

ԱՀ. 10 տոկոս ամենասպահով և 10 տոկոս ամենանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, 2014-2016թթ. (անգամ) **Հավելված 6**

	2014	2015	2016
Հստ դրամական եկամուտների	11.1	10.7	15.8
Հստ սպառողական ծախսերի	9.2	8.8	8.9

ԱՀ սպառման ազրեգատի և եկամուտների անհավասարությունը. 2015-2016թթ.

**Հավելված 7**

Զինիի գործակից		
	2015թ	2016թ
Սպառում	0.258	0.287
Եկամուտ	0.307	0.388

ԱՀ. Համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները, 2011-2016թթ. (ՀՆԱ-ի նկատմամբ, տոկոս ) **Հավելված 8**

	2011	2012	2013	2014	2015	2016

<sup>1</sup> [www.stat-nkr.am/](http://www.stat-nkr.am/)

Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	19.6	19.8	17.1	17.1	16.9	15.1
որից՝ հարկեր և տուրքեր	13.0	13.0	11.2	16.3	16.1	14.3
Ընդամենը ծախսեր	50.4	45.5	41.9	41.9	40.4	37.3
Պակասուրդ	-30.8	-25.7	-24.8	-24.8	-23.5	-22.2

ՀՀ Համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները, 2012-2016թթ. (ՀՆԱ-ի նկատմամբ, տոկոս) Հավելված 9

	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	22.9°	24.2°	24.4	23.8	23.7
որից՝ հարկեր և տուրքեր	21.1	22.4	22.5	21.6	21.7
Ընդամենը ծախսեր	24.3°	25.7°	26.3	28.6	29.2
Պակասուրդ	-1.4°	--1.5°	--1.9	-4.8	-5.5

ԱՀ Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը\* 2011-2016թթ. (տոկոսներով համախմբված բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ) Հավելված 10

	2011	2012	2013	2014	2015	2016
Կրթության ոլորտ	14.8	15.7	15.6	15.4	15.7	15.9
Առողջապահության ոլորտ	5.4	6.0	6.3	6.7	6.5	6.6
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ, կրոն	3.8	4.3	3.8	3.7	3.6	3.7
Կենսաթոշակներ**	13.1	13.9	13.3	13.5	14.2	14.1
Կենսաթոշակներ, ՀՆԱ-ի նկատմամբ	6.6	6.3	5.6	5.6	5.7	5.3
Այլ սոցիալական ծրագրեր	8.6	9.1	8.0	9.7	9.4	8.7
Ընդամենը համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսեր	45.7	49.0	47.0	49.0	49.4	49.0

ՀՀ. Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը\* 2011-2016թթ. (տոկոսներով համախմբված բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ) Հավելված 11

	2012	2013	2014	2015	2016
Կրթության ոլորտ	12.9	11.5	11.9	11.2	11.0
Առողջապահության ոլորտ	6.2	5.5	6.1	6.0	6.0
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ, կրոն	2.8	2.2	2.3	2.7	2.3
Կենսաթոշակներ**	19.8	17.6	19.4	20.0	20.0
Կենսաթոշակներ, ՀՆԱ-ի նկատմամբ	4.8	4.5	5.1	5.7	5.9
Այլ սոցիալական ծրագրեր	8.6	8.1	7.9	6.8	7.0
Ընդամենը համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսեր	50.3	44.9	47.6	46.7	46.3

**ՀՀ Աղքատությունն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների 2014-2017թթ.****Հավելված12<sup>1</sup>**

	2014թ	2015թ	2016թ
Սպառումը մեկ չափահասին համարժեք (ամսական), դրամ, 2014թ-ի միջին հանրապետական գներով	47 622.0	47 620.0	49754,4
Եկամուտը, մեկ չափահասին համարժեք, (ամսական), դրամ, 2014թ-ի միջին հանրապետական գներով	54 476.9	56 692.5	61484,0
Եկամուտ/սպառում հարաբերությունը	1.15	1.19	1,24
Սպառման ցուցանիշով աղքատներ(տոկոսներով)			
Ծայրահեղ աղքատներ	2.3	2.0	1,8
Աղքատներ	30.0	29.8	29,4
Եկամտի ցուցանիշով աղքատներ, (տոկոսներով)			
Ծայրահեղ աղքատներ	8.8	6.5	6,4
Աղքատներ	26.9	24.4	24,2

**ՀՀ Աղքատության հաղթահարման դրամական արժեքը, 2015-2016թթ.****Հավելված 13**

	ծայրահեղ աղքատ 2015թ.	Աղքատ 2015թ.	2016թ.	2016թ.
Աղքատների միջին սպառումը (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	21 652	21 072	35 054	34 881
Աղքատության գիծ (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	24 109	23 313	41 698	40 867
Աղքատներին պահանջվող լրացուցիչ սպառում (դրամ, ամսական)	2 457	2 241	6 644	5 986
Պակասուրդը՝ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառում աղքատության գծի նկատմամբ, (տոկոսներով)	10.2	9.6	15.9	14.6
ՀՆԱ (մլրդ. դրամ)	5 032.1	5079.9	5 032.1	5079.9
Անհրաժեշտ բյուջե (մլրդ. դրամ)	1.8*	1.4*	71.4*	63.2*
Անհրաժեշտ բյուջեն որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ	0.04	0.03	1.4	1.2

**ԱՀ Աղքատության հաղթահարման դրամական արժեքը, 2016թ.****Հավելված 14**

	ծայրահեղ աղքատ	Աղքատ
Աղքատների միջին սպառումը (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	17 347.8	26 883.5
Աղքատության գիծ (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	23 579.8	35 142.0
Աղքատներին պահանջվող լրացուցիչ սպառում (դրամ, ամսական)	6 232.0	8 258.5
Պակասուրդը՝ աղքատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառում աղքատության գծի նկատմամբ, (տոկոսներով)	26.4	23.5
ՀՆԱ (մլրդ. դրամ)	229.7	229.7
Անհրաժեշտ բյուջե (մլրդ. դրամ)	0.7 *	3.4 *
Անհրաժեշտ բյուջեն որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ	0.3	1.5

<sup>1</sup> www.stat-nkr.am/